Իմ պատասխանը միայն ընդգծուած բառերի մասին է, որոնց համար կարող էի իսկ և այժմեան մատենադարանապետ այսպէս կամ այնպէս պատասխանատու համարուել, մնացեալները ինձ չեն վերաբերում և գլխաւորապէս գրական պակասութեանց արդիւնք են։

Ս. Է. Հ. Ճ. Ուսուցիչ եւ մատենադարանապետ՝
**Ստեփան Կանայեանց**

12-ն մարտի 1910
Վաղարշապատ.

## Կարեւոր լուրեր.

«Մշակը» հաղորդում է. որ մայիսի առաջին չորսին (ն. տ.) Բեռլինում 42 տարեկան հասակում վախճանուել է սրտի հիւանդութիւնից հայագէտ փրանց Նիկօլաուս Ֆինկը։

Նրա հայագիտական աշխատութիւններից նշանաւորն՝ են 1. Արգար Յովհաննիսեանի հայերէն ձեռագրերի ցուցակը. 2. Տիւբինգէնի համալսարանի ձեռագրերի ցուցակը Լ. Գեանջեցեանի հետ, 3. Lehrbuch der Neu—ostarmenischen sprache, Ս. Կանայեանի հետ միասին, 4. «Հանդէս հայագիտութեան» կարճ կեանք ունեցող հրատարակութիւնը Լ. Գեանջեցեանի հետ միասին, 5. Հայոց գրականութեան մասին համառօտ ուրուագծեր «Literaturen der Ostens» և «Kultur der Gegen Narl» ժողովածուների մէջ։

5. Ս. Էջմիածնի տպարանում հրատարակել է 1902 թուին «Նեղոսի Դոքսապատրի կարգադրութիւն պատրիարքական աթոռոյն» հայերէն և յունարէն։ Հայերէն բնագրի հիմք են Մայր Աթոռոյ Մատենադարանի երկու ձեռագրերը, որոնց մասին տեղեկութիւն է տալիս հանգ. Ֆ. Հ. Ֆինկը։